

THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ԲԱԾ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒ :

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն , Գ Բ Ա Կ Ա Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 27

ՆԻՒ ԵՈՐԳ, ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ, 14 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՊԱՏԵՐԱՇՄԱԿԱՆ
ԼՈՒՐԵՐ

— Գոնկրէսը որոշեց զէնք, պաշար, ուղղամթերք և զօրապետներ զրկել Գիւլայի ապստամբներուն։
— Սպանիոյ խնամակալ թագուհին կ'ըսուի թէ դիմում ըրած է Եւրոպական կառավարութեանց ու անոնց միջամտութիւնն խնդրած է խաղաղութիւնը վերահաստատելու համար։
— Լէյտըն շոգենաւով պաշար ու ռազմամթերք զրկուեցաւ Գիւլայի արստամբներուն՝ Ուիլմինկթըն զըրաւորի հսկողութեան տակ։ Երբ առջինն Հալանայէ 40 մղոնի շահ արեւմուտք՝ Մարիէլի եղբրքը կը հանէր իր բեռները՝ սրանիական գունդ մը յարձակեցաւ Ամերիկացւոց վըրայ, բայց Ուիլմինկթընի թնդանօթներն ետ մղեցին թշնամին, և մօտակայ անտառէն այս պահուս վրայ հասնող Գիւլայի ապստամբներն յարձակեցան սրանիացւոց վրայ ու վանեցին զանոնք։ Սրանիացիք 16 մեռեալ և շատ մը վիրաւոր թողուցին։
— Աւստրիոյ կայսրը խնդրած է Ս. Պապէն որ նախաձեռնարկ ըլլայ խաղաղութիւնն հաստատելու համար՝ երկու կուռղ ազգաց մէջ։
— Սովը սկսած է Հալանայի մէջ ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է միշտ։ Սրանիացիք ներսերը կը փախչին։
— Պէրսիան հեռագիր մը կը մարգարէանայ թէ սրանիական կառավարութեան ձեռք հանրապետականի պիտի փոխուի քիչ ատենէն, եւ այս նոր կառավարութիւնն պատեւրազմը պիտի դադարեցնէ անմիջապէս։
— Հեռագիր մը կը կարծէ թէ Սրանիոյ թագուհին կը խորհի Աւըստրիայ փախիլ։ Վիէնայի մէջ պատրաստութիւն կը տեսնուի եղբր թագուհի ընդունելութեան համար։
— Մանիլայի նաւահանգստին մէջ ծովակալ Տուվի ընկղմել տուած զրահանաւերէ մի քանին մտադրութիւն կայ հանել և նորոգելով զայն՝ գործածել Սրանիոյ դէմ։
— Փօրթօ Րիբոյի մէջ 50 հազարէ աւելի սրանիական կառավարութենէ դժգոհ բնիկներ կան, որք պատրաստ են դէնք առնել մանուկ թագաւորի կառավարութեան դէմ կուռելու համար։ Կառավարութիւնն կ'ըսուի թէ պիտի զինէ այս բնիկներն քիչ ատենի մէջ։
— Սուէզի նեղուցը 1888ին կնքուած դաշնակցութեան մը համեմատ պատերազմի ատեն բաց է պատերազմող ազգաց ամէն տեսակ նաւերու առջև։ Միայն թէ արգելիւայ է նեղուցին մէջ կամ անոր մօտերն, մինչև երեք մղոն, ո՛ր և է բաղխում ունենալ իրարու հետ. անոր մուտքը պաշարել կամ անոր մօտերը զօրք ու ռազմամթերք հանել ևն. Այս դաշ-

նագրութիւնն կնքուած է վեց մեծ պետութիւններէն, Սպանիայէ և Թուրքիայէ միայն։
— Սպանիական ուրիշ նաւատորմի մը ճամբայ կ'ենէն Բատիզէն գաղտնի հրամանաւ՝ ծովակալ Գամարայի հրամանատարութեամբ։
— Հացին գինը բարձրացած է թէ հոս և թէ յԵւրոպայ։ Իտալիոյ մէջ շատ կողմեր յեղափոխութիւն ելած է՝ Հացի սղութեան համար։ Ճլորանսի, Միլանի և այլ և այլ քաղաքներու մէջ զինւորական օրէնք կը տիրէ այս առթիւ։
— Նախագահ Մաք Գինի յանուն Միացեալ Նահանգաց ժողովրդեան՝ շնորհակալութիւն յայտնած է ծովակալ Տուվիի անոր տարած յաղթանակին համար։ Ծովակալը օրուան հերոսն, Աքթիւն Ատմիրըլ աստիճանին բարձրացած է, և քիչ ատենէն Րիբ Ատմիրըլ պիտի ըլլայ, որ ծովային զօրաց ամենէն բարձր աստիճանն է։
— Ծովակալ Սամսընի նաւատորմի մը անհամեմատ զօրաւոր և ընտիր կը կարծուի սրանիականէն, որուն հետ պիտի ճակատի այս օրեր։ Ոչ միայն ամերիկեան նաւերն ու թնդանօթներն, այլ և նշանաձիգներն ու նաւազներն սրանիացիներէ շատ աւելի վարժ ու հմուտ են իրենց մահացուցիչ գործին մէջ։
— Ամիրըլ Սամսընը Սրանիացւոց ամենէն հզօր նաւատորմիցն է որ կուռի պիտի բռնէ այս օրեր։ Այս վերջինն երկրորդական զէնքերու մէջ հաւասար է Ամերիկեանին հետ. բայց առաջնակարգ ծանր թնդանօթներու մէջ ավելած է շատ։ Սրանիական նաւերն իրենց մէջ ունին ընդ ամէնն 6 հատ 11 ինչնոց թնդանօթ միայն, մինչ ամերիկեան նաւատորմիցն ունի 3 հատ 13 մտանաչափոց, 8՝ 12նոց և 22 հատ՝ 8 նոց թնդանօթ։
— Տեղական և Անգլիական մամուլը կը կարծեն թէ Միացեալ Նահանգ Թիլիբեան կղզիներն պիտի պահեն, և զայն ամերիկեան գաղթականութիւն մը նկատեն ապագային։
— Մատրիսի ամերիկեան ղեկավարն ժէնեզըլը Վուտֆրաւ անցեալ Շաբաթ օր Գաղղիական շոգենաւով հոս հասաւ, և անմիջապէս Ուաշինկթըն մեկնեցաւ, ուր պիտի մնայ մինչև պատերազմին վերջը՝ իր նախագահին խորհրդակալն։
— Մանիլայի մէջ ամբողջ մեծ իրարանցումի մէջ է. անցեալ օրը սրանիական ծովակալը, Ատմիրըլ Մօնթէճօ և իւր երկու զաւակներն ըսպանուեցան։ Ծովակալ Տուվի կը հեռագրէ հոս թէ չէ կարող ամբողջ զսպել, և թէ իրեն համար վտանգ կայ։
— Ամերիկեան մարտնաւերու կրակած մէկ ուռմըր Մանիլայի հիւանդանոցին վրայ ինկած ու շէնքը հրդեհի ենթարկած է, որմէ շատ մը մայրապետներ մեռած են։
— Ուաշինկթընի կառավարութիւնը դեռ որոշած չէ թէ ինչ պիտի ընէ Մանիլայ կղզին։ Գաղաքագէտներն ումանք զայն պահել կը փաստա-

բանեն, և ոմանք՝ վաճառել լաւագոյն կը սեպեն Բրիտանական կառավարութեան։
— Օ. Պէլմանթ, Հանրածանօթ միլիտանտէրն ու խուճր մը զրամատէրներ առաջին կարգի զրահանաւ մը նուիրել առաջարկած է ինձնաշինկթընի կառավարութեան։ Կառավարութիւնը մերժեց այս նուէրը, զի, կըսուի թէ նուիրատուն իբր պայման առաջարկած էր նաև ուն հրամանատարութիւնն իրեն վերապահել։
— Սրանիական կառավարութիւնն Գանատայի ընկերութենէ մը 10 հազար թօն անուի գնել ուզեց և մերժուեցաւ։ Այս ցոյց կուտայ թէ Տօները Հիւսիսային ծովեզրեայ քաղաք մը ուրակոծելու միտք ունին—եթէ կարողանան։
— Մատրիսի մէջ ամբողջ կառավարական միջնորդները այրեց։
— Սպանիական մարտնաւեր ձիւրկարթարի նեղուցին առջև կեցած անցնող շոգենաւներն կը խուզարկեն. ուրիշ մը Միջերկրականի մէջ ամերիկեան զօրանաւերու ետեւէ կը շրջի։
— Զօրավար Մայըլ իր պաշտօնեայներուն հետ Թամփա գնաց, ուսկէ 50 հազար զօրք պիտի սկսի Գիւլայ զրկել։
— Գերման մամուլը կը շարունակէ հակաամերիկեան լեզու մը գործածել։ Բօլնիշէ Ֆօլքս Յայթունկ կ'ըսէ «Սպանիայէ վերջ, ամերիկեան անամթութեան երկրորդ զտէր Գերմանիան պիտի ըլլայ»։
— Պատերազմական նախարար Ալեքսի և զանազան գործոց նախարար Կէյնի մէջ մեծ անհամաձայնութիւն մը ծագած է, անանկ որ անոնցմէ մէկին հրատարիլը կ'սպասուի ամէն րոպէ։
— Միլանի մէջ Հացի համար տեղի ունեցած կուռի մը մէջ 1000 հոգի մեռեր են։
— Սպանիոյ Գէյը վէրտի նաւատորմիցը, որ Փօրթօ Րիբոյի մօտերը կը կարծուէր լինիլ, հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գատրս վերադարձէ։ Սա անակնկալ դէպք պատերազմական նախարարութեան յատակագիծը կը փոխէ բոլորովին։
— Ծովակալ Սամսընի նաւատորմի մը կըսուի թէ Փօրթօ Րիբօն պիտի գրաւէ, իսկ Լէյթինը՝ Գիւլայն յառաջիկայ մի քանի օրերու մէջ։
— ձիւրկարթարի նեղուցին մէջ սպանիական թօրիխանաւ մը պայթեցաւ ու բոլոր նաւազները մեռան։ Տժբաղը Սպանիացիք։
— Մ. Նահանգաց րանակը Գիւլայ սկսեց փոխադրուել։
— Բէյը վէրտի նաւատորմիցը 24 ժամէն ճամբայ պիտի ելնէ Գատիզէն կնքեալ հրամանի տակ։
— Վերջի Պառուս լուր եկած է թէ Ծովակալ Սամսըն Փօրթօ Րիբօի մայրաքաղաքը ուրակոծել ու ամբողջութիւնները փլցունել սկսած է։
— Սպանիական կառավարութիւնը 100 միլիոն տուր խնդրեց վեհաժողովէն՝ պատերազմական ծախուց համար։

ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐ ՄԸ
Փրօվիտէնս, 5 Մայիս
Նոր Հոգարարութեան ընտրութեան առթիւ կնճռոտ խնդիր մը երեւան եկաւ ազգային ժողովոյ մէջ, Արթ. Տ. Վաղինակ վարդապետ կը պնդէր թէ ընտրութիւններն պէտք էր ազգային սահմանադրութեան համեմատ կատարել, և որ աւելին է անով կառավարել Ազգ. Կրօնական բոլոր գործերն։ Ժողովը դէն ոմանք զայս անկարելի նկատեցին, որովհետև սահմանադրութիւնն կը պարունակէր այնպիսի յօդուածներ որք Ամերիկայի մէջ անկարելի էր գործադրել. օրինակի համար. ազգ. սահմանադրութիւնն ընտրող և ընտրելի ըլլալու իրաւունքն կուտար անոնց միայն, որք Թրքական են, և մեղանշած չեն Տաճիկ կառավարութեան դէմ. քանի որ Ամերիկայի Հայերս թրքահպատակ չենք ընդհանրապէս, և մենք շատեր մեղանշած են Սուլթանի կառավարութեան դէմ, ի՞նչպէս կարելի էր հաշտուիլ այդ յօդուածին հետ ու կառավարուիլ ազգային սահմանադրութեամբ։ Մենք կ'ընդունինք թէ սահմանադրութիւնը սրբագործուած է Հայ արիւնով, ու նուիրական օրէնքն է թրքական ժողովրդին. բայց զայն իր ամբողջութեամբ հոս անկարելի է գործադրել, եթէ ոչ ուրիշ, գէթ յիշեալ յօդուածին համար։ ԱՐԱՔՍ

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՆ
Փաթըրսընէն կը գրեն մեզ թէ նոյն քաղաքի քաղաքապալ գորաց անդամներէն Տիարք Պետրոս և Գէորգ Զանգալեան, Տիարք Պէշկէօթիւրեան, Գէորգ Թաղազեան եւ Յարութիւն Պոնափարթեան՝ կամաւոր գրուած են ու մեկնած են կանոնաւոր բանակին միանալու։
Մեր թղթակիցներէ, ինչպէս նաև ուրիշ քաղաքաց ընթերցողներէ կը խնդրենք որ իրենց կողմէն զինւոր կամ կամաւոր գնացող Հայոց անուններն, անոնց գնդի թիւն եւ ուրիշ մանրամասնութիւններ հաղորդեն մեզ՝ հրատարակութեան համար։ Այս հրաւերն կը կարգաւոր սահմանադրութեան պատմագիր Սպանիայի մէջ հրատարակուած լրագրէ մը պիտի ջանայ այս մասին քաղել ամէն լուր, և տեղ մը յատկացնել անոնց մեր ժամանակակից պատմութեան մէջ։
ՈՒՐ. ՏԻԳՐԻՍԻ
Մեր Պրայթընի գործակալն է Տ. Մ. Պ. Գալուստեան. իսկ Ուսթըրի մէջ մեզ կը ներկայացնէ Տ. Յ. Բարակեան։ Իրաւունք ունին այս պարոններ բաժանորդ գրել և դրամներն գանձել մեր հաշուոյն։
— Պարոն խոհարար, ինչ կընես։
— Սովիտն կը սրբմ։
— Ինչ ընելու։
— Պատերազմի դաշտը երթալ և Հայ կամաւորներուն շըջ քեպպի շինելու։



ՇԱՐԿԱՌԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի մէկ անգամ ամիսը,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան	Տ. ՍԹ.	Տարեկան	10 Ֆրանք.
Վեցամսեայ	50	Բաժանորդագրին ԿԱՆՈՒԿ Վճարելի է միշտ:	
Յուսմանայ	40		


Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝

To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱՐԿԱՌ, ՄԱՅԻՍ 14 1898.

Ս Ի Գ Ր Ա Կ Ա Ն Ք



ԳԵՐ ՄԵՆՔ ԱՆ ՀԵՏԵ-ԻՒՆՔ

Տարբեր սրենակի մը մէջ կը հրատարակենք այսօր կարեւոր թղթ-թղթակցութիւն մը Պօս-թոնէն, որ կը պատմէ թէ տեղւոյն մեր Հայրենակիցներն վերջերս մի ընդհանուր ժողո-

վի մէջ կարգ մը որոշումներ քուէարկած են միաձայնու-թեամբ, ու անոնց օրինակներն անգլիական լրագրաց ներ-կայացուցիչներուն յանձնած են ի հրատարակութիւն:

Այս որոշումներով մեր Պօսթոնի Հայրենակիցներն կը դատաւարտեն սրանիական կառավարութեան յոռի վար-չութիւնն ի թիւ պայ. կը հիանան Միացեալ Նահանգաց հե-տեւած մարդասիրական: ներկայ քաղաքականութեան. կը համակրին պատերազմին, և որ աւելին է, կ'որոշեն այս մասին ընել ամէն ինչ որ «կարող են ընել»:

Աւելորդ է ըսել թէ այսպիսի որոշումներ թէ և ինքնին մեծ նշանակութիւն չունին Միացեալ Նահանգաց կառա-վարութեան առջև, բայց այսու հանգեւրձ Հայ գաղթական-նութեան զգայմանց անխաբար արտայայտութիւններն են, անոնց անկեղծութեան ու հաւատարմութեան սպա-ցոյցները, և կամ պարզապէս կաթիլ մը ջուր ժողովրդա-կան ընդհանուր ուղիղտեսին մէջ. բայց մտնալու չէ թէ ովկիանը կաթիլներէ բաղկացած է միայն:

Պօսթոնի Հայ գաղթականութեան այս հեռուտու ըն-թացքը արժանի է արգարե ամէն գովեստի, ոչ թէ ո-րովհետեւ այդու իրենց ազգային-քաղաքական մի պարտա-կանութիւնն կատարած եղան միայն, այլ և որովհետեւ բա-րի օրինակ մը տուին միւս Հայ գաղթականութեանց, որք պարտաւոր են այս բացառիկ պարագայի տակ նոյն ընթաց-քին հետեւելով ցոյց տալ աշխարհի թէ ինչպէ՛ս Հայ-ա-մերիկացիներու սիրտն ալ կը տրոփէ ուժգին, երբ բազմակից ժողովրդի մը ազատութեան համար, իրենց որդեգրած երկրի կառավարութիւնն պատերազմ կը հրատարակէ բռ-նակալ բարբարոսներու դէմ:

Մենք՝ Ամերիկայի Հայերս, որ Միացեալ Նահանգաց դրօշակին տակ պաշտպանութիւնն ու ապաստան գտած՝ ա-նոր բոլոր անանձնաշնորհումներն կը վայելենք անխոր, պարտաւոր ենք ի հարկին՝ իբր մարդ և ամերիկեան քա-ղաքացիներ՝ կուրիլ անոր թշնամիին դէմ, երբ մանա-ւանդ կուրիլ շարժարեալ ու հարստահարեալ ազգի մը ա-զատութեան համար է մղուած:

Մեր այս համոզումն ու հաւատքը ժամանակն է որ յայտնենք ընդհանուր ժողովրդին ամեն տեղ. ցոյց տանք անոնց, որոց հետ ապրել վիճակուած է մեզ, թէ Հայ գաղթականութիւնն ալ՝ հաւատարիմ իր կոչման՝ գիտէ իւր պարտականութիւնն կատարել նոյն չափով՝ որով իր իրաւունքներն կը վայելէ այս ազատ դրօշակին տակ:

Հայ գաղթականութիւնն գործով ցոյց տուաւ արդէն այս ամէնէն: Գիշ թէ շատ Հայ կամաւորներ միացան Ըն-քըլ Սամբանակին՝ հասարակաց թշնամիներուն դէմ կըռ-ուելու համար: Այժմ ժամանակն է արդէն որ գաղթա-կանութիւնը իրենց համոզումն հրատարակաւ յայտնեն աշ-խարհի և մանաւանդ տեղական ժողովրդին:

Յետաձգելու չի գար այս խնդիր, զի ո՛չ ոք կրնայ ը-սել թէ պատերազմը որ՛չափ կրնայ տեսել: Թշնամիի անկ-եալ վիճակը, Մանիլայի մէջ իւր կրած չարաչար պար-տութիւնը, և որ աւելին է, ներքին պառակտումներն գու-ցէ ստիպեն մանուկ թագաւորի կառավարութիւնը ծուռգի գալ Ընքըլ Սամբ, առջև և անկէ գթութիւն խնդրել քիչ օրէն:

Պարտականութիւնն կ'զգանք կոչում ընել մեր բոլոր Հայ գաղթականութեանց որ՝ առանց ժամանակ կորսնցնե-լու՝ ժողովներ գումարեն ու իրենց զգացումներն որոշու-մներու ընդունուած ձեւով արտայայտեն հրատարակաւ: Թե-րեւ այս առաջին քայլ մը ըլլայ ապագային քաղաքական կեանքի մէջ ձայն ու նշանակութիւն ունենալու համար... ո՛չ ապաքէն մենք ալ քուէ ունինք, ձայն ունինք, ընտ-րելի և ընտրող ըլլալու իրաւունք ունինք հոս:

Վերջացնելէ առաջ այս յօդուած, Գաղաքիս Հայոց համար, որք այս խնդրոց մէջ նախաձեռնարկ, և միւս գաղթականութեանց առաջնորդ ըլլալու էին, ըսելու ենք ակնկոր:

Գէթ հետեւինք... : Հ. Է.

Մ Ա Ն Ի Լ Ա Յ Ի Կ Ի Ի Լ

Ատմիրալ Տուվրի պաշտօնական տեղեկագիրն ու Մա-նիլայի մեծ կուռնի մանրամասնութիւններն շարժուա մէջ՝ Հօնկ Բօնկի ճամբով հեռագրուեցաւ հոս: Այս նոր տե-ղեկութիւններն ընդհանրապէս կը հաղորդեն ինչ որ ծա-նուցած էր կանխաւ՝ Մանիլայի հեռագրական թիւերը կըտ-րուելէ առաջ:

Վերջի տեղեկութեանց նայելով ծովակալ Տուվրի նա-ւատորմի շօնկ Բօնկի ճամբայ ելաւ Ապրիլ 27ին՝ Ֆի-լիբին արշիպելագոսը գալու, հոն Մօնթնօյի նաւատոր-միդն ոչնչացնելու ու Մանիլայ քաղաքը գրաւելու մտօք: Ամերիկեան նաւատորմիդը, որ կը բաղկանար Օլիմպիա, (դը-րօշակաւաւ), Պալիսթոր, Բալէն, Փէթրէլ, Բօնքօրս և Պոսթըն գրահանուերէ, Մանիլայի ծովածոցը հասաւ նոյն ամսոյ 30ի երեկոյին: Երբ ստոնք կարգաւ կ'անցնէին Բօ-րէճիտոր կղզիին առջևէն, լուսնի պայծառ լուսով՝ ա-ռանց ու է լրագրող ունենալու, կղզիին բերդերէն Սթան-իացիք կրակել սկսեցին: Ընքըլ Սամ իր մահառիթ ուռ-մբերով լռեցուց զանոնք ու շարունակեց իր ճամբան: Առա-ւօտուն կանուս Տուվրի նաւատորմիդը Մանիլայէ հինգ մղոն առջին՝ Բալիսթէյի բերդերուն առջև պատահեցաւ սպանիական նաւատորմիդին, որ կը բաղկանար 12 կտոր այլ և այլ կարգի նաւերէ: Թմբակոծութիւնը սկսեցին ան-միջապէս: Սպանիացիք թէ՛ նաւերէն և թէ՛ բերդերէն կրակել սկսեցին ամերիկեան պատերազմողներուն վրայ, որոց անընդհատ կրակին տակ՝ կրեցին այն պարտութիւնն որ յաղթութեան պահին եղաւ Տուվրի գործութեան: Սթան-իացիք կուռնի ասին երկու թօրփիլոններ պայթեցուցին, բայց հաշիւն սխալ ըլլալով՝ ասոնց պայթիւնն ոչինչ փնտա տուաւ ամերիկացիներուն: Երկու ժամ կուռելէ վարջ Տու-վրի նաւատորմիդն բացը քաշուեցաւ, ուր նախաձեռն և քիչ մը հանգիստ առնելէ վերջ նորէն յարձակեցաւ՝ վերջի հարուածը տալու համար: Մէկ ու կէս ժամ ևս կուռելէ յետոյ ջուրին վրայ սպանիական դրօշը կրող ո՛չ մի նա-ւանց կուռելու կարող: Նախ ծովակալ Մօնթնօյի դրօշա-կանաւը կրակ տանելով վաւել սկսեցաւ, և յետոյ միւս-ներն մէկիկ մէկիկ ընկղմեցան ու պայթեցան, ու Բալի-սթէյի վրայ ճերմակ դրօշը անձնատուր ըլլալու նշանն տուաւ: Ամերիկացոց յաղթութիւնն կատարեալ էր:

Հետեւեալ օր, երկուշաբթի, ծովակալ Տուվրի տիրեց բոլոր բերդերուն, ու աստեղազարդ դրօշը պարզեց անոնց անոնց վրայ՝ սրանիականին տեղ: Մանիլա, որ Ֆիլիբին կղզեաց մայրաքաղաքն է՝ գրաւուած չէ տակաւին, թէ և Ամերիկացի Հերոսը կարող է զայն գրաւել ո՛ր և է ժամա-նակ, քանի որ բերդերն ու ամրոցներն իր արամադրու-թեան տակ կը գտնուին:

Այս ճակատամարտին մէջ Սպանիացիք շատ ծանր կո-րուտ ունեցան: 1200ի շափ անձինք մեռան կամ վիրա-ւորուեցան, որոց մէջ է նաև զրահաւորներու մէկին նա-ւապետ պաշտօնեայն: Ինը բերդեր՝ տակն ու վրայ՝ Ամե-րիկացոց ձեռքն անցան, ու ամբողջ նաւատորմիդն ոչն-չացաւ բոլորովին: Սպանիացոց կորուստը կը հասնի վեց միլիօն տոլարի: Ամերիկացիք կեանքի կորուստ չունեցան երբէք. միայն 8 անձինք վիրաւորուեցան՝ Պալիսթորի մէջ. իսկ նաւերու փնտը 5000 տոլար միայն կը հաշուուի:

Ատմիրալ Տուվրի կուռէն վերջ՝ մերժուած ըլլալով հե-ռագիրն գործածել, կտրեց անոր թիւերն ու այս տեղե-կութիւններն արագնիթաց նաւով մը Հօնկ Բօնկի դրկուե-ցան՝ Ամերիկայ հեռագրուելու համար:

ԱԶԳ

Բարեգործական Ընկերութեան ներկայ Պաշտօնատեղին է ի թիւ 145 Իսթ 23րդ փողոց, վերի յարկ, 13րդ սենեակ: Դիմումներ կընդունուին ամէն օր, կէս օրէ վերջ, ժա-մը մէկէն մինչև չորս: Իսկ առտուններ Գործակալ տես-նել փափաքողները կանխաւ պարտին լուր տալ:

Ի դիմաց Հայոց Բարեգործական Ընկերութեան Նիւ Եորք, 10 Մայիս Գ. Մ. ՍԻՐԱԿԱՆԱՆԱՆ Գործակալ

Կիրակի երեկոյ տղատ լսարանի մէջ, ի թիւ 57 Ուէսթ 57րդ փողոց, պիտի խօսին Տքթ. Արշակունի «Միտու օ-գուտներն ու փնտներն», և Տիար Ս. Բէպպապեան «Մի-ացեալ Նահանգաց կառավարութեան դրուութիւնը»:

ՈՐԲԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Արթ. Տ. Մաշտոց Վարդապետ կը գրէ:

Նիւ Եորքի մէջ կաղմուած է «Արեւմտեան Նիւ Եորքի Արքայնամ Միութիւն». Արեւմտեան՝ վասն զի բոլոր անգամներն ալ Նիւ Եորքի վէպ-թի կողմը կը ընակին: Միութիւնը եօթնեակի դրուութեամբ է (օրը մէկ սէնթով) և բաղադրուած վեց եօթ-նեակներէ՝ իրենց յատուկ անունե-րովը. «Կայծակ, Մուրճ, Դաշոյն, Սասուն, Փայլակ և Ճապուկ»: և որ աւելի նախանձնին է, Միութիւնը իւր անդրանիկ պտուղն ալ տուաւ՝ զրկելով ինձ՝ ի նպաստ որոցո՞ վաթ-սուն տոլար:

—Սաացայ շնորհակալութեամբ նաև Ուաշըրի Տիկնայն Գրադարանի Օժանդակ Միութեանէն \$ 26.70 (26 օսմ. լիբայի հաշուով), զոր Խարրերդ պի-տի զրկեմ՝ իբր առաջին տարուան ծախքն աղջիկ որբի մը, որ պիտի պահուի միշտ՝ Ազգ. Արքանոցներէն մէկուն մէջ՝ յանուն այդ ազգօգուտ Միութեան:

—Սաացայ նաև Նիւ Պրիթէյնի Հայոց մի եօթնեակէն 15 տոլար, իբր առ հաշիւ որբի մը տարեկանին:

—Իբր մասնաւոր նուէր սաացայ 3.50 տոլար Պեարտ Սնտուրեանէն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԽԱՉ-ԲԱՐ

Անցեալ Կիրակի Ս. Փրկիչ Եկե-ղեցոյ մէջ հանդիսարարապէս օծ-ուեցաւ Եկեղեցոյ դուրսի դրան վը-րայ դրուելիք մարմարիօնայ յա-տուկ խաչ-քարը, որոյ վրայ փորա-գրուած էր ոսկեգօծուած սառեկով հետեւեալ արձանագրութիւնը թէ հա-յերէն և թէ անգլիերէն լեզուներով. «Սուրբ Փրկիչ Ազգային Եկեղեցի Հա-յոց. հիմնեալ 1890 Ուսթըր, Մ. Ն. Ա. Կիրակիօրայ պաշտամունք և քարոզ ժամ 10.30, Ազգ. Հարան՝ երեկոյ-եան ժամը 7.30»:

Սոյն արձանագրութիւնը փորագ-րած էր տեղւոյն ազգայիններէն Մհ. Խաչիւր Աւագ Մանուկեան ձրիարար: Օժանդակ կընտրեցաւ Եղաւ Պ. Կարա-պետ Դաղարեան՝ 5 տոլար նուիրե-լով: Եղիա ձորձորեան մէկ տոլար նուիրեց այս առթիւ:

ՀԱՅԿԱՅ. ԹՈՒԹ

ԻՆՁ ԵՂԱԻ

Ուսթըր, Մայիս 6 Հայ Երիտասարդաց Զանց ընկե-րութիւնը անցեալ ամսոյ մէջ նուա-զահանգէս մը տուաւ ինպատար որ-րոց, որոյ հասոյթը կը կարծուի լի-նիլ 65 տոլար: Մինչև այսօր ո՛ր և է ձայն չի կայ. արեւօք այդ գումարը զրկեցին որոց, և որոնք միջոցաւ: Այս կարեւոր խնդիր մը ըլլալով՝ կու-գամք հրատարակաւ խնդրել սոյն ընկերութեան վարչութիւնէն որ հա-ճի բացատրութիւն տալ այս մասին:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Պ. Բ. Բէյմարիճ Փօրթ — Բըզլըր չէ, այլ Բիպըն՝ որ ժապաւէն ըսել է: Գ. Ի. Պրայթըն — Թերթ կատանաք: Մ. Յօլ Բիվըր — Այդ գործին համար մէկը անունած է. մանրա-մասնութիւն չենք գիտեր:

Փ. Ա. Ս. Փրօվիտէն — Չեր հաս-ցէն ուղիղ է մեր տեսարակի մէջ. Փօսթի մէջ այդպիսի դէպքեր կը պատահին երբեմն: Մ. Յ. Ն. — Չեր նամակն ա-ռած ենք: Ինչ է հասցէնիդ:

ՎԵՐՋԻ ԼՈՒՐ

Վերջի պահուս անունած հեռա-գիր մը կը ծանուցանէ թէ Մօլյա-կալ Սամբընի նաւատորմիդը, ինը գրահանուերէ բաղկացեալ Սան ձու-ան քաղաքը կը ռմբակոծէ: Մանրա-մասնութիւններն հասած չեն տակա-ւին: Ի թիւսթէն կը հեռագրուի թէ Ամերիկացիք փորձեր են ֆարտէ-նաս (Հալանայ) զօրք հանել, բայց բերդերէն կրակել սկսած են Սթան-իացիք:

Կ'ըսուի թէ ամերիկեան զրահա-նաւ մը ընկղմած է, շատ մըն ալ Ամերիկացիք սպաննուած են: Մանրամասնութիւնը կ'սպասուին:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՏԻԳՐԻՍԻ

Պատուարքի քայլ մը. — Հայ կամաւորներն. — Յանցանքը որինն է:

Պոսթըն, 2 Մայիս Բաղաքիս Հայկական Լսարանի վերջի ժողովին մէջ, որ տեղի ունեցաւ երէկ երեկոյ ի ներկայութեան 400ի չափ ազգայնոց, հետեւեալ որոշումներն թուարկուեցան, և ընդունուելով բուն ծափահարութեամբ՝ Տ. Փափազեանի կողմէ յանձնուեցան տեղական լրագրաց ներկայացուցիչներուն, որք կանխաւ հրաւիրուած էին:

Ա. Պոսթընի և շրջակայից Հայերս յընդհանուր ժողով գումարեալ, կը դատապարտենք միաձայնութեամբ Սպանիոյ յոռի վարչութիւնն Գիւլայի մէջ, և մասնաորապէս անոր բարբարոսական ընթացքը դէպի խելագիր կողմերը, որոց մեծ մասը կիներէ և մանուկներէ կը բաղկանայ:

Բ. Կը յայտնենք մեր հիացումը Միացեալ Նահանգներու կառավարութեան բուն ընթացքին համար, որ, եւրոպական շահամուտ անբարեխաղանակներու, յանուն մարդկութեան իր բանակն ու նաւատորմը ի գէն կոչած է Գիւլայի ազատութեան համար:

Գ. Իբր սիրահար ազատութեան և քաղաքակրթութեան, և իբր ամերիկեան քաղաքացիներ կորուցնէ թէ յօժարութեամբ յանձն կուենանք կատարել ինչ ծառայութիւն որ կրնանք ի յաջողութիւն այս մեծ դատին, զոր որդեգրուած է Ամերիկայի կառավարութեան կողմէ:

Այս ժողովին մէջ խօսեցան կարգաւ Տիրք Եօզհանէսեան, Տամիանեան և Պաղտասարեան, ասոնց բոլորին ալ նիւթն էր օրուան խնդիրը:

Նոյն ժողովին մէջ նկատուեցան անուանեցաւ Հայ կամաւորներու խնդիրը. ասանախօսները բացատրեցին անոր աղէկ ու յոռի կողմերն. եւ ժողովը կան առիթ տրուեցաւ իւր կարծիքն յայտնել այդ մասին:

Հետաքրքրական է տեղեկագրել թէ մինչև ցարդ կամաւոր գումարներու թիւը 7ի հասած է, որք կըսպասեն կոչումը՝ մեկնելու համար:

Երկու Շարաֆներէ ի վեր Բաղաքիս Հայ ժողովուրդը կ'ուպասէր Լորէնտի Տէր Ստեփան Բազանային պատարագը լսելու, բայց Տէր տէրը կրկին չեկու, կամ չկրցաւ գալ իւր կամքէն անկախ պատճառներով, ինչպէս կ'ըսէր Արթ. Մաշթոց վարդապետը:

Այլ տակայն Պոսթընի Հոգարար-ձուլեան անդամներէն մին շուգիւղով կրկին և կրկին ժողովուրդը յուսախար ընել, և ամօթով մնալ Եպիսկոպոսականաց Եկեղեցականին առջև, որ բարեհաճած էր փակուած եկեղեցւոյ դուռը բանալ Հայոց համար, և աչքի առաջ ունենալով ժողովուրդի անսահման քննադատութիւններն, բոլոր պատասխանատուութիւնն իւր վրայ առած, կը հրաւիրէ Ուսթընէն Արթ. Մաշթոց վարդապետ՝ որ նոյն ինքն է եղած գլխաւոր արգելքը Տէր Ստեփանին Պոսթըն դալուն: Հոս տեղըն է ըսել այս առթիւ թէ ալ ուշ կամ կանուխ հրապարակ պիտի ելնեն այն կարգը մը շահամուտական և անձնատիրական ձեւումներով կատարուած գարձուածքները, որք տեղի ունեցած են վերջի 10 ամիսներու շրջանին մէջ, և որոց՝ Պոսթընի մի դասակարգէն ի գաւա ուրիշներ տեղեկ չեն:

Արթ. Մաշթոց վարդապետ երէկ առաւ Ս. Պատարագ մատոյց. ներկայից թիւը 43 հոգի էր:

Պատարագիչ հօր քարոզին նիւթըն էր՝ հաւատք, սէր և Գրիստոնէութիւն, որ բաւական բացատրելի վերջ խօսքը դարձուց Պոսթընի նախորդ Հոգարարութեան վրայ. թէ և

բացարձակ չը յայտնեց, բայց հասկըցուց իր միտքը թէ կը ցուէր որ այն համառուոր Հոգարարութիւնը մինչև ցարդ պաշտօնական Հոգարարութիւն չէր ճանչցուած. և «կ'ըսեն թէ Հոգարարութիւններն ալ Հայր Մաշթոցին Պոսթընի հովիւ չեն ճանչցած»: վերջապէս մի քիչ ալ կը ծու ահարկներ ընելով ժողովուրդի անտարբեր ընթացքի նկատմամբ, տեղի տուեց ժողովուրդին մէջէն ընդգրկմասնութիւններու ձայներ լսել: Բարոյը վերջացաւ որբերի խնդրով, և ժողովուրդը մեկնեցաւ առանց ըսպասելու պատարագին շարունակման: Եկեղեցի մնացին միայն պիտաններն ու Պատարագիչն: Բայց յանցանքը որինն է:

ԱՌԱՋԻՆ, ԲԱՅԼ

Մայիս 2, Նիւ Եորք վերջերս տեղւոյ Թանգարանի ժրջան վարչութիւնն բացաւ վերջապէս իր ընթացքարանն, ի թիւ 239 իսթ 27րդ փողոց: Թէ ինչ արդիւնք կ'ունենայ այս ձեռնարկը, ապագան ցոյց կուտայ. բայց գիտնալու համար թէ ի՞նչ էր ընթացքարան կոչուած բանը ներկայիս մէջ՝ անցեալ օր այցելեցի զայն: Մեծ զուշուրթեամբ մը դուռը բացի՝ վախճալով թէ մի գուցէ խանգարեմ ընթացողները միտքը. բայց չարաչար խաբուեցայ երբ հակառակ իմ ակնկալութեան՝ նոյն թղթախաղների եւ նոյն նարտերի ձայնը լսեցի: Լաւազոյն գաղափար մը կարգուեալ համար՝ ստոր վրայ աւելցուցր իր կարգի ձեռնարկը, եւ ճաշարանի մը իսկ անյարմար ժխորը: Կանգնեցայ և նայեցայ չորս կողմը: Մէկ անկիւնը գրախալ մը դըրուած կար, ան ալ գոց, որոյ մէջ կար քանի մը կտոր գրքեր: Իսկ օրակարգի թիւերը ամբողջը գզգզուած՝ ձգուած էին ամբողջութեամբ վրայ: Գալով այցելուները տեղ չէին գտնել նստելու. պարտաւորուած էին թերթերը փայտի տեղ գործածել: Ես ուզեցի մի բան կարգաւ, և ձեռքս անցաւ «Մալախի» մի համար, և սեսայ որ քանի մը մասերու էր բաժնուած: Կարող չ'եղայ յատուած մը իր ամբողջութեամբ դուռը բերել և կարգաւ. լաւ համարեցի զզուանքով դուռը երթալ՝ քան խանգարել խաղցողները: Չի գիտեմ ինչու խնամակալութիւնը այդ մեծ զոհարարութիւնը ըրած է... Թուղթ խաղալ, նարտ խաղալ, պղտիկ սենեակին մէջ ծխել շարունակ, և եթէ մաքընիս ալ ինկաւ զիրք կարգաւ... հիանալի՛ բան:

Ներկայիս կոչում կ'ընեմ Գրադարանի բոլոր անդամներուն՝ որ մըտածեն և վերջ տան այս անկեալ վիճակին, որ ունի այժմ Գրադարանը, և զենի գայն այնպիսի վիճակի մը մէջ որ օգտակար ըլլայ ամէն դասակարգի:

Կ'սպասենք երկրորդ քայլին: ԾՈՎԻԿ

ՌՈՒՍ ՈՉՆՁԱԿԱՆԱՑ ԴԱՏԱՍԱՆԸ ԱՆԳՆՈՑ ՄԵՋ ՄԱՄՈՒԼԻ ԱՉԱՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ

(Շարունակութիւն և վերջ) «Տէլի Բրոնիքը» տրուած վճիռը թէ և իրաւացի, բայց քիչ մը ծանր կը գտնէ, և կը կարծէ թէ երկրին մէջ գոհացուցիչ տպաւորութիւն չի պիտի թողու այն: Այս երկրի ամենէն բարձր պարձանքներէն մէկն այն է որ քաղաքական փախստականներու ապաստանարան կ'ընծայենք, եւ անշուշտ իր անուան արժանի ո՛ր է և ինչ իրաւացի մը չպիտի ուզեր հիւրընկալութեան այդ օրէնքը ջնջել կամ նոյն իսկ սահմանաւորել: Ասկէ զատ,

Պերձէվի կեանքի պատմութիւնը ամէն անգլիացի կարգացողին սիրտը խորապէս կը յուզէ: Մեր կարծիքով Պերձէվի դէմ տրուած վճիռը պէտք եղածէն աւելի խիստ էր: Կարևոր էր միայն բացորոշապէս հասկնել օտար սեսակ ընթացք մը չկրնար թողաւորուել, և այդ հասկնելու համար՝ երեք ամսուան բանտարկութիւնն ալ բաւական կրնար համարուել: «Թայմզ» ալ, որ ամենէն շատ մանրամասնութիւններ հրատարակած է այս դատավարութեան վրայ, խըմբաբարկանի մը մէջ կը բաղդատէ այս դատաստանը, այս միջոցիս Յըրանայի մէջ տեղի ունեցող Չօլայի նշանաւոր դատաստանին հետ, և այս առթիւ ի վեր կը հանէ երկու երկիր-կիրներու օրէնքներուն և բարքերուն տարբերութիւնը:

Երկու խօք ալ * մեր կողմէ աւելցնելով՝ հարկ չենք դատար խօսիլ նոյն իսկ դատավճռին ծանրութեան կամ թեթեւութեանը վրայ, և չենք ուզեր բառ մը արտասանել որը կարծեցնել այս թէ ու է կերպով կը համակրինք Ռուս ոչնչականներու ծայրայիշ ծրագիրներուն, այլ մենք կ'ուզենք այս ըսել թէ, եթէ Ռուս ոչնչական մը մէկ ու կէս տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ, շահողը Ռուս կառավարութիւնը չէ՛. կ'ուզենք ըսել թէ բունպետական կառավարութիւնները բան մը չեն շահիր իրենց դէմ բողոքի ձայն բարձրացողներու դէմ ուղղակի կամ սնուողակի դատ բանալով ազատ երկիրներու մէջ — վասն զի տարակոյս չկայ որ Անգլիական կառավարութիւնը Պերձէվի դատի չի պիտի ենթարկէր, եթէ այդ բանը յատկապէս Ռուսական կառավարութեան կողմէ պահանջուած ըլլար: — Հաւանօրէն Պերձէվի ծայրայիշ գըրութիւնները շատ անձուկ շրջանի մը մէջ կը կարգացուէին, թերևս կարևորութիւն ալ չէին ստանար. անոնք երբէք չէին կրնար այն խորունկ տպաւորութիւնը թողուլ հանրային կարծիքին վրայ՝ ինչ որ թողուց Ռուս բանակապետական դրութեան դէմ այն ծանր դատապարտութիւնը՝ որը արտասանեց Լօրտ Բօլրիճ իր պաշտպանողական պիւրճախօս ճառին մէջ: Այս տեսակէտով կրնանք ըսել թէ դատարանը երկու վճիռ արձակեց, մէկը՝ երկու սոսկական անհատներու դէմ, իսկ միւսը՝ Ռուս կառավարութեան բունպետական դրութեան դէմ:

Բաղաքակրթութեան տարանմը առջև իր ամօթալի դատապարտութեան գնովը ձեռք բերաւ ուրեմն Չարին կառավարութիւնը երկու անհատներու դէմ արձակուած այդ անշուն, ժամանակաւոր վճիռը: Նախանձելի չէ՛ այնքան սուղի նստած յաղթանակ մը, և շատ անարբեր մի յորիշ բըռնակապետալ—որը «Մեծ Մարդասպան» կը կոչուի— այն «յաղթանակ»ն որ ձեռք բերաւ եւրոպական ուրիշ մայրաքաղաքի մը մէջ իր մէկ հպատակին դէմ, որու անուանական դատապարտութիւնը իրեն պատուոյ սիտղոս եղաւ և զինք դարձուց օրուան մարդը. հարկ չկայ ըսելու թէ կ'ակնարկենք «Մէշլէրթի» խմբագիր Բիզա Պէյի դատաստանին, որ ամիսներ առաջ տեղի ունեցաւ Բարիզի մէջ:

—Ա՛, հա՛. աս էր պակաս մեր մէջ. վաղը Ամերիկեան դատարաններն ալ ձեզ Պերձէվի բաղդին պիտի արժանացունեն:

—Ինչ ո՞ւր. ինչ ըրած ունինք:

—Այդ ինչ ուսմբեր են որ կը շինէք գաղտնիք:

—Ատոնք ուսմբ չեն, բարեկամ:

—Հապա ինչ են:

—Սարրուժ քիւֆթէսի կըսեն ասոնք:

ՍՈՒԻՆ

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Բ Ք

—Պրայթընէ կը գրեն թէ տեղւոյն Հոգարարութիւնն 40 տուար հանգանակած է՝ Արթ. Պաղ վարդապետի հին ամառաններուն համար:

—Հաշուեցնիչ Յանձնախումբն իր տեղեկագիրը մատոյց անցեալ Երեքշաբթի երեկոյ Ազգ. Հոգարար-ձուլեան Ատենապետին:

—Մեր Ուսթընի յատուկ թղթակիցն կը գրէ. «Սբանիօ-Ամերիկեան պատերազմը մեծ տպաւորութիւն ըրած է տեղս գտնուող այն Հայ ընտանիքներու վրայ, որք կտորածէ խոյս տալով հոս ապաստանած են: Ասոնք կը կարծեն թէ Սբանիացիք պիտի յաղթեն ու Ամերիկան, Հայաստանի պէս, խժգոնութեանց թատր մը պիտի ընեն. ուստի կը խորհին Գանատայ գաղթել՝ ապահովութեան համար»:

—Հայկաթոռ Ուսթընի մէջ անկախ գործ ունեցող Հայոց կատարեալ ցանկն պատրաստելով՝ զրկած է մեզ ի հրատարակութիւն: Մեր թղթակիցը կ'ըսէ թէ դեռ Ուսթընի Հայերն իսկ չէին գիտեր թէ որչափ Հայեր գործ ունէին այս քաղաքի մէջ: Այս ցանկին նայելով 55 հայկական գործեր կան հայաշատ քաղաքին մէջ. ահաւասիկ մանրամասնութիւնն. 1 դերձակ, 5 նպարավաճառ, 6 սափ-րիչ, 8 ճաշարան, 8 կօշկաւոր և նորագիչ, 1 շաքարավաճառ, 1 հանգեր-ձավաճառ և կօշկավաճառ, 3 պրտա-ղավաճառ, 2 բժիշկ, 1 լուսանկարիչ, 1 ժամագործ և գոհարավաճառ, 1 բաղանիք, 3 վառելու փայտ կտորելու գործարան, 10 փայտավաճառ (կառ-քով), 1 պղուրի գործարան, 1 տը-պարան (Եփրատ):

—Կիրակի երեկոյ Ազատ Լսարանի մէջ վիճաբանուեցաւ թէ Ամերիկայի Հայ երիտասարդութեան համար Հայ թէ Ամերիկացի օրիորդներու հետ ամուսնանալ օգտակար է: Թեր ու դէմ կարծիքներն յայտնուել վերջ, ընդհ. թուարկութեամբ որոշուեցաւ թէ Հայուհիին կողմը պաշտպանող-ներու փաստերն աւելի զօրաւոր էին:

—Ճըրգիի մէջ Տ. Վահրամ Բէն. երկու մկրտութիւններ ըրաւ անցեալ Կիրակի օր:

—Լինի իմընիկ Նիւզ լրագրին մէջ կը կարդանք թէ Տիկին Սէյրանեան—որ տեղւոյն երեկոյեան վարժարանի վարժուհին է եղած անցեալ տարի—և Տիկին Մուրատեանի ծանօթ գատը տեսնելով փօլիս քօր-թին առջև, հակառակ մեր ստացած անդեկութեանց, Տիկին Մուրատեան յանցաւոր գտնուած է. սակայն յանցանքն այնքան անշուն նկատուած է որ դատաւորը բաւական սեպած է զայն արձանագրել տալով բաւականանալ: Այս խնդիրը ծագում առած է քանի մը պնակներ կտորած ու ըստ արժանւոյն փոխարէնը չի վճարած լինու անտեղի վիճաբանութեան մը:

—Յօլ Բիւլընէն մեր թղթակից Տ. Միւրան կը գրէ. «Փառք Աստուծոյ, Թանգարանի միութեան ժողով մալ մենք ունեցանք Մայիս մէկին: Երկու տիկիներ խոսեցան օգտակար նիւթերու վրայ: Մինչև վերջի բոպէ-ները տպաւորութիւնն շատ աղէկ էր, բայց երբ կոչու մեզ 23 տուար մէջ հաւաքելու, ամէն կողմէ արատոց ձայներ լսուել սկսեցին: Միութեան շանդամակցող ու դրամ տալու տը-րամագրութիւն չունեցող գոհակի դատակարգին կը վերաբերին ասոնք»:

—Որբախնամ Տիկինն և Լսարանի վարչութեան առած վերջի հանդիսի եկամուտն եղած է մօտաւորապէս հինգ հարիւր տուար: Ոնդուկ որբերու աչքը լոյս:

